նը սէրն է և նորա վարդապետութեան դրոշակի վրայ «սէր» բառն է դրոշմած, քանզի ասաց Քրիստոս «Այսու միայն ծանիցեն զձեզ թէ իմ աշակերտ էք, եթէ զմիմեանս սիրիցէք» (Յոհան. ԺԳ. 35) և Քրիստոսի աշակերտ Յովհաննէս Աւետարանիչը կասէ «Եթէ զեղբայրն՝ զոր տեսանես, ոչ սիրես, զԱստուած որ ոչ տեսանես, զիարդ կարիցես սիրել»։ (Ա Յոհան. Դ. 20)։ Սիրել պէտք է զմիմեանս. սիրել գործքով, արդիւնքով, ապացուցուց. այն է ձեռք տալ իրար, ընկերանալ, մի ընտանիք կազմել հաւաքական միացեալ ոյժերով, որպէս մի անձնաւորութիւն նուիրել ընդհանուր ազգի շահերին, այսպիսի միայն միջոցով և եղանակաւ կարող ենք ապրիլ երկրիս վրայ երջանիկ, և երկնքումը՝ խոստացած յաւիտենական կեանքը վայելել։ Ամենայն Հայոց հետ և ես կը մաղթեմ, կեցցէ Մարդասիրական ընկերութեան մարդասէր հիմնադիրների արժանաւոր յիշատակը։

Կեցցեն և նորա խորհրդական պատուաւոր անդամք, որ մարդասիրութեան և առանձնապէս ազգասիրութեան և միանդամայն ուսումնասիրութեան սրբազան դրօշակը ձեռք առած՝ ազգութեան, կրօնի, ուսման և գիտութեան փրկարար լոյս կը բերեն, կը տարածեն և կը ճառագայթեն մինչեւ անդամ Հայութեան հրապարակի ամեն խորշերը։ Աստուած տայ, որ այդպիսի լուսով պայծառանային, զարգանային. և Հայ մանկրտոյն սրտերը, և զայդ կը խնդրենք յԱստուծոյ։ Իրաւամբ եմ կրկնում, քանզի գործքն օրհնեն և ապացուցանեն, որ Բաղուայ Հայ հասարակութեան ազգասիրական գործքը իրենց քրիստոնէական սիրոյ և բարեպաշտութեան արդիւնք են, քանզի քրիստոնէական ոգին է որ մարդկանց եղբայրական սիրով շաղկապելով, մի սիրտ մի հոգի է կազմում, պատրաստում, ուստի և պարտաւորեցնում է օրհնել, բարերարել, յիշատակ թողուլ, Աստուածային վարձուց և անմահութեան ակն ունել, ընկերին, ազգին նուիրել ամեն ինչ, և այսպէս «փոխադարձ ծառայութեամբ միմեանց պահպանել զանքակտելի կապակցութիւն աշխարհիս». և յետ այնր կատարեալ երջանկութեամբ մեր Տեառն Յիսուսի խոստացած արքայութեան մէջ մտնելով